ԼՂՀ

Ստեփանակերտում Արցախյան շարժման 20 ամյակին նվիրված հանրահավաքին ղարաբաղյան դրոշների ու այլ պաստառների ֆոնին նկատելի էին նաեւ «Առաջ Հայաստանի» դրոշները, որոնք, հավաքար, ՀՀ նախընտրական քարոզարշավից էին մնացել կամ էլ Սերժ Սարգսյանի հաղթանակն էին ավետում:



ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ՝ ՎԱՐՉԱՊԵ՞Տ

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Արփի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի «Հայլուր» լրատվական ծրագրին հետեւող ղարաբաղցիները հազիվ թե կասկածեն ընտրությունների օբյեկտիվության ու թափանցիկության վրա: Շատերն են հպարտանում համերկրացու հաջողություններով: Իսկ հույսը Հ1-ի վրա չդնողների կարծիքով՝ Հայաստանի իշխանություններին կարելի է շնորհավորել վրձնի մեկ հարվածով «փայլուն մաթեմատիկական գործողություններ» կատարելու համար: ԼՂՀ զինված ուժերում ծառայող զինվորը, որ չցանկացավ անունը նշել, պատմում է, որ իրենց տարել են Գորիս՝ քվեարկության: Ասում է, որ իրենց տվել են արդեն լրացրած քվեաթերթիկներ, ու իրենք, լուռ ու մունջ՝ ծրարները գցել են քվեատուփերը: Նրա խոսքերով՝ ինքը մեկն է այն հարյուրավոր զինվորներից, ովքեր պարտադրաբար քվեարկել են Սարգսյանի օգտին:

Ստեփանակերտցիները խոսում են, թե 19-ի գիշերը Տեղ գյուղը եւս վերածվել է վրեժխնդրության հրապարակի. Լեւոն Տեր-Պետրոսյանի ու Սերժ Սարգսյանի կողմնակիցների միջեւ կռիվ է սկսվել: Երեւանում բնակվող ղարաբաղցիներն էլ ահազանգում են, թե ղարաբաղցիների մի մեծ խումբ հատուկ բերել են Երեւան, որպեսզի քվեարկեն Սարգսյանի օգտին: Երեկվանից Ստեփանակերտում լուրեր են պտտվում, թե ԼՂՀ մի խումբ բարձրաստիճան այրեր եւս գնացել են Երեւան, որպեսզի իրենց օգնությունն առաջարկեն իշխանություններին, բայց ստացվել է այնպես, որ նրանց օգնությունը պետք չի եկել, եւ նրանք, քոռ ու փոշման՝ վերադարձել են 20 ամյակը նշելու: Ի դեպ, երեկ նրանցից շատերը մասնակցում էին Արցախյան շարժման տոնակատարությունների բանկետին՝ կենացների փնջում պատվավոր տեղ հատկացնելով նաեւ Սերժ Սարգսյանի հաղթանակին: Երիտասարդ ղարաբաղցիները եւս կարծում են, որ ՀՀ ընտրություններն անարդար են անցել, թեեւ ուրախ են, որ իրենց համերկրացին է հաղթանակել: «Ինչպես հասկանում եմ, ընտրություններն արդար չեն անցել, ըստ երեւույթին, գործի են դրվել վարչական ռեսուրսները»,- ասում է 22-ամյա Լուսինե Գասպարյանը: Իսկ Նարինե Սողոմոնյանը, առանց ավելորդ զարմանքի, նշում է, որ «պիտի Սերժը հաղթեր, նա էլ հաղթել է»:

Ղարաբաղցիները խոսում են նաեւ հնարավոր զարգացումների մասին: Ասում են, թե մտադրություններ կան ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանին նշանակել կամ ՀՀ վարչապետի, կամ արտգործնախարարի պաշտոնում: «Բա Քոչարյանին ի՞նչ կանեն էդ դեպքում» հարցին առավել տեղեկացվածները պատասխանում են, թե «Սերժը Քոչարյանին պաշտոն չի տա, որովհետեւ համոզված է, որ եթե ոտքը պնդացնի, վերջ, էլ պրծում չի լինի»: